

ՏԱՍՆ ԵՒ ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունւում է ամէն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպեկ:

ԱՌԱՋԻԿԱՅ 1892 ԹԻԱԿԱՆԻՆ

20-ՐԻ ՏԱՐԻ

20-ՐԻ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ԳՐԱԿԱՆՆԵՐՆԵՐ ԵՒ ՔԱՂԱՔԱՆԵՐ ԼՐԱԳԻՐ

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն զիրքով և նոյն պրոգրամայով: Մենք կը ստանանք միմյան կան շնորհակալութիւններ:

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսականը՝ 9 ռ., ինն և ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ., մի ամսականը՝ 1 ռուբլի:

Գրվել «ՄՇԱԿԻ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարձրակարգ և Բարձրագոյն փողոցների անկիւնում, Թամակաճիւղի տանը):

Կայսերութեան ուրիշ քաղաքներէն «ՄՇԱԿԻ» գրվելու համար պէտք է դիմել հետեւեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունւում են թէ հայերէն, թէ ռուսերէն և թէ օտար լեզուներով:

Վշակի առաջին երեսի վրա մասնաւոր յայտարարութիւններ չեն տպագրւում, այլ տպագրւում են միմյան: Ըրադիւնների յայտարարութիւնները, մասնացոյցակները և պաշտօնական հաստատութիւնների յայտարարութիւնները, որոնց համար կրկնակի է վճարւում: Մասնացոյցակի տպագրելը առաջին երեսի վրա արժէ 4 ռուբլի, իսկ չորս և քիչ երեսի վրա՝ 2 ռուբլի:

Խմբագիր-հրատարակող ԳԻՐԻՈՐ ԱՐՄՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խմբագրութեան կողմից.—ՆՈՐԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մատենագրութիւն. Բաթումի գործարան. ներքին կենտրոն. Նիւթերի գիւղական կենտրոն. ուսումնասիրելու համար. Նամակ Դարաշիւզից. Նամակ Ներքին-Ախտայից. Նամակ Խմբագրին. Նամակ Խմբագրին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ԽՈՒՆ ԼՈՒՐԵՐ.—ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Որովհետեւ մի ամիս է մնացել միայն մինչև նոր տարին, յիշեցնում ենք մեր թէ անցեալ 1890 թվի և թէ ներկայ, 1891 թվի, այն բաժանորդներին, որոնք մինչև այժմ չեն վճարել իրանց բաժանորդագները, որ ժամանակ է արդէն վճարել իրանց պարտքը: Մենք աւելորդ ենք համարում այստեղ երկար ու բարակ բացատրել այն պարզ ճշմարտութիւնը թէ ամեն մարդու պարտաւորութիւնն է, եթէ նա ինքն իր յօրար կամքով է գրվել լրագրին, ճշդութեամբ էլ վճարել իր բաժանորդագները: Մենք յարմարվելով մեր երկրի տարօրինակ բայք ու վարքերին, դարձեալ այն զիջում ենք անում մի քանիներին, որ սպասում ենք մարդկային, իսկ չափ անգամ երկու տարի շարունակ մինչև որ նրանք կը բարեհաճեն վճարել իրանց պարտքը:

Ոչ մի տեղ, ոչ եւրոպայում, ոչ էլ Ռուսաստանում, մամուլը այդ տեսակ զիջում չէ անում բաժանորդներին: Լրագրիներին գրվելով թէ ամբողջ տարով, և թէ մի քանի ամսով ամեն տեղ մարդիկ կանխիկ են վճարում բաժանորդագները: Ոչ մի տեղ տեսնված չէ լրագրին նիսիա գրվելը: Բայց այնու ամենայնիւ մենք պատրաստ ենք այդ զիջումը մի անգամ.—գոնէ բաժանորդ գրվողները տարվայ վերջը վճարելին իրանց վրա մնացած ապաւինելով:

Բացի սրանից խնդրում ենք «Մշակին» առաջիկայ 1892 տարվայ համար բաժանորդ գրվողներին շուտով յայտնել իրանց յանկուծիւնը «Մշակը» ստանալու, որպէս զի մենք բաժանորդներին թվի համեմատ մեր պատրաստութիւնները տեսնելիք, և թվի համեմատ էլ տպագրելիք յունվարի մէկի համարը բաւականաչափ քանակութեամբ: Եթէ ոչ, նրանք, որոնք կուշանան գրվելու, կարող են և չը ստանալ ոչ թէ միայն առաջիկայ տարվայ առաջին համարը, բայց և առաջին մի քանի համարները:

ՆՈՐԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

«ՀԱՄԱՌՈՑ ԶԵՆՆԱԿ ԿԱՆՈՒՄԱՌ ՇԵՐԱՄԱՊԱՆՈՒԹԵԱՆ» Ի. Ալիզի.—Թիֆլիս, վարդանաճարի տպարան, 1891 թվի:

Ֆրանսիացի շերամագ պ. Ալիզի այս օրերս հրատարակեց շերամագրութեան վերոյիշեալ ձեռնարկը ռուսերէն, հայերէն, պարսկերէն, վրացերէն և թուրքերէն լեզուներով:

Գրքից բաղկացած է 28 երեսից, և հարստացրած է մի քանի պատկերներով: Գրքից բաժանվում է հետեւեալ գլխերով. 1) Շերամի սերմի ձեռք բերելը, 2) Սերմի պահպանելը, 3) Շերամատան օդափոխութիւնը և նրանում դրսևած առարկաները, 4) Սերմի կենդանանալը, 5) Առաջին հասակը, 6) Երկրորդ հասակը, 7) Երրորդ հասակը, 8) Չորրորդ հասակը, 9) Հինգերորդ հասակը, 10) Բաժանարարը, 11) Որդերի հիւանդութիւնները, պեքերի, սեանալը, մուսկարդին, դեղնու, 12) Ցեանանաց, փայլունք և կարճիկ որդեր, 13) Ցելուէր սերմը, 14) Մանրադիտակով ընկնելիքը, և 15) Եղրակացութիւնը:

Առհասարակ յայտնի է, որ պէտք է ծանօթ լինել այն միջոցներին, որոնք անհրաժեշտ են կանոնաւոր շերամագրութեան համար: Այդ պատճառով պ. Ալիզի, իր գրքից իր առաջաբանի մէջ կամեցում է բացատրել այն դիտողութիւնները, որ ինքն արել է, իր կարողութեան չափ, և հաղորդել այն տեղեկութիւնները, որ ինքն դուրս է բերել իր երկարատե փորձերից թէ եւրոպայում և թէ Ասիայում շերամագրական երկրներն այցելելու ժամանակ: Կարծում ենք որ շերամագրանքը այդ ձեռնարկի մէջ կը գտնեն այնպիսի գործնական խորհուրդներ, որոնք օգուտ կարող են բերել իրանց: Եւ դա է եղել իսկապէս, հեղինակի նպատակը:

Յայտնի է որ շերամագրութիւնը շատ նուրբ և մանրակրկիտ պարագայունք է. ամենաշնչին անհոգութիւնն իսկ կարող է պատճառ լինել ապագայում բոլոր եղած հոգսերի և աշխատանքների կորստեան: Գլխաւորապէս պէտք է զգուշանալ օդի տաքութեան խիստ և ծայրայեղ փոփոխութիւնից: Տաքութեան աստիճանի արագ ցածրանալը, կամ խոնավութիւնը ամենալատ հետեւանք կարող է ունենալ որդերի կենսութիւնը և իսպառ ոչնչացնել շերամագրութիւնից բոլոր սպասելի արդիւնքները:

Չեւնարկի հեղինակը, խօսելով որդերի հիւանդութիւնների մասին, աւելացնում է, որ շերամագրութեան գլխաւոր պայմանը որդերին կանոնաւոր և խելացի կերպով պահելու մէջն է. պէտք է աշխատել որքան հնար է, պահել շուտ սկսել և շուտ վերջացնել, որովհետեւ որքան այդ գործողութիւնն ուշանայ, այնքան էլ որդերը պիտի դանաղան խոնդոտների հանդիպեն: Շերամագրութեան ժամանակամիջոցը որքան կարճ է և քիչ, հետեւապէս նրա վրա աւելի քիչ ժամանակ և աշխատանք է գործադրւում, այնքան էլ, ուրեմն, թէ ձեռնառու և թէ արդիւնաւէտ կը լինի: Հեղինակը վերջացնում է իր խօսքը ասելով թէ շերամագրութիւնը դիւրագոյնացանք պարագայունքների բոլոր ճիւղերից ամենաարդիւնաւէտն է համարւում, քանի որ ուրիշ ճիւղերին պատկանող պարագայունքների վրա գործ դրված դրամագլխի տոկոս ստանալու համար պէտք է սպասել երկար տարիներ և պատրաստ լինել ամեն տեսակ անաշուղդութիւններին:

Այնպիսի տեղեկութիւն, ամենաանոյ, ուր հողը թանց չէ, շերամագրութիւնը կարող է մեծ օգուտներ տալ և հարստացնել արդիւնաբերողին:

ԲԱՌՈՒՄԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ԿԵԱՆՔԸ

Շատ հետաքրքիր քաղաք է Բաթումը: Յանձնված լինելով 78 թուականին Ռուս կառավարութեանը մի փոքրիկ գիւղաքաղաքի մեծութեամբ, նա սկսեց հսկայական քաղաքով մեծանալ և ներկայումս արտաքին կողմից բաւական լաւ տպագրութիւն է թողնում: Կարելի է համարձակօրէն ասել, որ Բաթումը կողմիսի առաջնակարգ քաղաքներից մէկն է որպէս իր բնակիչների թւով, նոյնպէս և փողոցների մաքրութեամբ ու լայնութեամբ, կառուցված տների շքեղութեամբ և կենսանքի այն գործունէութեամբ, որ տիրում է ամբողջ քաղաքում: Բայց չը նայելով քաղաքի գլխաւոր մասում գտնվող գեղեցիկ մաքուր տներին, չը նայելով ծովափի բաւական լաւ բուլվարին, չը նայելով նաւահանգստի մօտ գտնվող բազմաթիւ արձարաններին, — մի բան յայտնի սուր կերպով աչքի է ընկնում կողմիսի քաղաքներից ոչ մէկում չը կան այլքան բազմաթիւ կեղտոտ, հիւանդատ, թուլացած, թմրած, հարբած ու անբարոյականացած մշակներ, ինչպէս այստեղ: Բաւական է մի քանի ժամ պտտել նաւթի գործարանների մօտ, մտնել այդ գործարանների մէջ, որոշ գաղափար կազմելու համար այն մշակ, պանդուխտ դաւաւարի մասին, որը կազմում է քաղաքի մեծամասնութիւնը:

Առաւօտեան, երբ դեռ արեւի ճառագայթների հետքեր էլ չը կան, մշակների թաղում սկսվում է մի խուլ շարժում: Նկղ աղտոտ, խոնավ տներից սկսում են դուրս գալ գործարանների մշակները: Վարքաղցին հազում է իր կարճ չուլան, լուսեցին իր լայն չալվարը, մէջքին դնում է իր փոքրիկ գտակը և ամենքը քնաթաթախ, շատերը երեսներն էլ չը լուացած, շտապում են դէպի գործարանները, որտեղ ժամը 6-ին ըսկաւում է աշխատանքը: Այսպիսով ամենքը իրանք քնած տեղից (չեւ ասում անկողնից, որովհետեւ մեծամասնութիւնը անկողնի չունի), բարձրանում են ժամը 4½—5-ին: Սկսվում է աշխատանքը: Անկարելի է նկարագրել այն արագութեամբ, որը տիրում է գործարաններում: Մենք հաւատացած ենք, որ գիւղական աշխատանքները, որից ոչ մէկը, նոյն իսկ հունձը չէ ներկայացնում այսպիսի դժուարութիւն: Եթէ սրա վրա աւելացնենք գործարանների սարսափելի օդը և այն թունաւոր գազերը, որոնք բարձրանում են այս անոց, Բաթումի աշխատանքը կարելի է անվանել ինքնուրույն և հոտած: Նախաճաշիկը կատարւում է 1½ ժամ նախաճաշիկի և մէկ ժամ ճաշի համար: Նախաճաշիկը կատարւում է նաւթի հետ շաղախված մի կտոր հացով, հինգ այնտեղ, գործարանի դռանը, ճաշելու համար մի քանիսը գնում են իրանց տները, իսկ մեծամասնութիւնը՝ անկարող լինելով մի ժամկէտ ընթացքում գնալ քաղաք, ճաշել ու վերադառնալ, մնում է գործարանում, կերակրվելով փոքր մըրդեղէնով ու հոտած միացորդներով: Երեկոյեան ժամի 6-ին հնչում է գործարանի ղիլն. մշակները դադարեցնում են իրանց աշխատանքը և քիչ թէ շատ շտիկելով, մաքրվելով, ժամի 7—7½-ին հաղի են թողնում գործարանը:

Բաթումի գործարաններում Մենք հաւատացած ենք, որ գիւղական աշխատանքները, որից ոչ մէկը, նոյն իսկ հունձը չէ ներկայացնում այսպիսի դժուարութիւն: Եթէ սրա վրա աւելացնենք գործարանների սարսափելի օդը և այն թունաւոր գազերը, որոնք բարձրանում են այս անոց, Բաթումի աշխատանքը կարելի է անվանել ինքնուրույն և հոտած: Նախաճաշիկը կատարւում է նաւթի հետ շաղախված մի կտոր հացով, հինգ այնտեղ, գործարանի դռանը, ճաշելու համար մի քանիսը գնում են իրանց տները, իսկ մեծամասնութիւնը՝ անկարող լինելով մի ժամկէտ ընթացքում գնալ քաղաք, ճաշել ու վերադառնալ, մնում է գործարանում, կերակրվելով փոքր մըրդեղէնով ու հոտած միացորդներով: Երեկոյեան ժամի 6-ին հնչում է գործարանի ղիլն. մշակները դադարեցնում են իրանց աշխատանքը և քիչ թէ շատ շտիկելով, մաքրվելով, ժամի 7—7½-ին հաղի են թողնում գործարանը:

Վերադառնում են գործարանից, բայց ինչ դրութեան մէջ... Սեպտեմբ, աղտոտ, շոգ և ամբողջ մարմինը նաւթով շաղախված, սարսափելի կերպով յոգնած ու ծանր աշխատանքից դուրսնալիս: Սրանցից մի մարդ անկարող լինելով այլ ևս օդի վրա մնալ, դիմում է դէպի ճահիճներով լի թաղը յագեցնում է մի կերպ իր սովը և ընկնում է յատակի վրա մինչև միւս առաւօտ: Աւելի առողջներ և երիտասարդներ, որոնք դեռ նոր են եկած գիւղից, կամեցում են գոնէ մի երկու ժամ արթուն հանգստանալ, մաքուր օդ ծծել, տեսնել երկիրը ու գետին, վայր գցել իրանցից գործարանի ճնշումը, թափ տալ ամբողջ կազմուածքը և մարդ զգալ իրանց: Բայց աղտոտ, մրոտ գնալ պարտեղը անկարելի է դուրս գալ և պահպանել չը թողնէ ներս մտնելու: Թրմրեցնող աշխատանքից յետոյ հարկաւոր է և ազդիչ, զգալի դուրսնալիս: Մշակը դուրսնալ է և դիմում է դէպի քաղաքի գիւղերը, որտեղ քանիներ և անաւակաց տներ:

Բոլորին յայտնի է, որ Բաթումի գործարաններից մի քանիսում շատ անգամ չեն տօնվում կիրակի օրերը, այն միակ օրը, երբ կարող է մի քիչ հանգստանալ ամբողջ շաբաթ աշխատող մշակը: Ինչու սրա վրա ուշադրութիւն չէ դարձնում քաղաքային վարչութիւնը: Իսկ եթէ կիրակի օրեր տօնելը հակառակ է այդ վարչութեան շահերին (գոցել այն պատճառով, որ վարչութեան անդամներից ոմանք գործարանատէրերի հետ սերտ կապ ունեն), ինչու լուռ է մնում հոգևոր իշխանութիւնը:

Մի քանի գործարաններում էլ շատ անգամ երեկոյեան ժամի 6-ին չեն արձակում մշակներին, այլ աշխատեցնում են էլի մի քանի ժամ Հասկանալի է, որ այդ բանը մեծ դժգոհութիւն է յարուցանում մշակներին մէջ շարկաւոր է նոյնպէս արգելել գիւղերից աշխատանքը, թէև մի քանիսը իրանց յօրար կազմով աշխատում են օրական մինչև 18—20 ժամ: Եւ չեմ խօսում այն բոլոր տուգանքների մասին, որ վճարում են մշակները ամեն մի չնչին բանի համար: Գործաւատները օգուտ են քաղում այն դէպքերից, որոնք մշտական հետեւանք են գործարանի ու գործարանական կենսութեան: Այդպիսով տուգանքները մի քանի տեղ դարձել են ամբողջ սիստեմ, որով կողմնակի կերպով մեծացնում են առանց այն էլ հարուստ գործարանատէրերի եկամուտը:

Ասածս բաւական է հասկանալու համար թէ անկարելի է այս ամենը թողնել առանց ուշադրութեան: Ներկայ պարագաներում գործարան

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ ղեկավարներ 4-ին, երեկոյան 8 ժամին, լինելու է անուրդ (առանց կրկնաճրկի) կապալով տալու Ներսիսեան Հին դպրոցի ներքնայարկի 36 կրպակները հանդերձ նկուղներով և սառուցանով: Պայմանաթուղթը կարելի է կարգալ հոգաբարձութեան ղեկավարան մէջ ամեն օր, բացի կիրակի և տօներէն, առաւօտեան 10-ից մինչև 12 ժամը: 1—3

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ 4-ին ղեկավարներ ամսի 1891 ամի, երեկոյան 8 ժամին, լինելու է երկրորդ անգամ անուրդ (առանց կրկնաճրկի) կապալով տալու նոյն դպրոցի կառուածքը № 46 և 49 (ընծայած հանգուցեալ Գարուէթին Աքոյանցից), որոնք գտնուում են Կուր գետի հեղեղատի մօտ: Պայմանաթուղթը կարելի է կարգալ հոգաբարձութեան ղեկավարան մէջ ամեն օր, բացի կիրակի և տօն օրերէն, առաւօտեան 10-ից մինչև 12 ժամը: 1—3

ՌՈՒՍԱՑ ՑԻՐԿ ՆԻԿԻՏԻՆ ԵՂԱՅՐԵՆԵՐԻ

Այսօր, շաբաթ օր, 23-ին նոյեմբերի, ԳԱԼԱՍ հանդիսաւոր ներկայացում, մասնակցութեամբ ցիրկի ղեկավար Ա. Ա. Նիկիտինի, և սպանիական Բալետային խմբի երկրորդ անգամ վարդերի ֆէա կը կատարէ օրիորդ Յովիա Դոմարովա, պոպուրի կը կատարէ Ֆերոսիմովա ընտանիքը, սալտանօրայէ ձիւ վրա կը կատարէ Բէլինի, կը հեծնեն օրիորդ Գիգիւս, պ. Մապոլ և ուրիշները: Վերջում մեծ և զգեստաւորված պանթոմիմ «Երկու արջեր»: Մանրամասները պրոգրամում: Սկիզբը 8 ժամին երեկոյան: 1—2

ԱՐՏՈՆԱՅԱԾ ԵՒ ԱՆԸՆԴՀԱՍՏԱՐԱՐ ԲԱՆՈՂ

ՊՐԵՍ ԽՈՏԻ ՀԱՄԱՐ

Նմանապէս բուրդի, բամբակի, կանեփի համար և այլն Ռուսաստանում յայտնի է **ԼԻՊԶԱՐՏ** և ընկ. գործարանից, ուղարկված է լաճառման համար յատկապէս Կովկասում: Այդ պրէսի տակ սեղմված խոտից մի վազմին մէջ մտնում է 600 պուր: Կարելի է օրական աւելի քան 1000—1300 պուր այդ պրէսի տակ գցել: Պրէսը կարելի է տեսնել, կամ նրա մասին տեղեկութիւններ ստանալ ԷՋՄԱՍՆՈՒՄ (Երևանեան Կահանա-գում), Լ. Գ. Խան-Աղանի մօտ: Նմանակով պատասխան ստանալու համար պէտք է ուղարկել պատասխան 7 կոպէկանոց մարկա: Հասցէն, Эммануэль (Эрив. губ.) Л. Е. Хан-Агалов. 1—2

ՇԵՆՈՐՀԱՎԱԼՈՒԹԻՒՆ

Պ. Է. ՊԵՏԼԻՆ (Օրբէլեան փողոց տուն № 5) նրա պատրաստած ընդարձակ և չարդող երկրորդայ, զարհակիր շիպի համար, որը կշռւում է 120 պուր և ունի «Protector» անունով ամենալաւ, արտօնացած կողպէքները: Կարող եմ ամենքին խորհուրդ տալ ձեռք բերել պ. Պէթլին արդիւնաբերութիւնները, քանի որ, յաճախելով նրա արհեստանոցը, ես համոզվեցայ որ ամբողջ աշխատանքը նրա արհեստանոցում կատարվում է իրան, պ. Պէթլին, անձնական վերահսկողութեան տակ և իր արդիւնաբերութիւնները պատրաստելու համար գործ են դրվում ամենալաւ նիւթեր: Երկրորդ զիջելայի վաճառական՝ Կարապետ ՍԵՐՈՎԱՅԱՆ: 1—2 (2)

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳԻՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
MESSAGERIES MARITIMES
(ՄԵՍՍԺԵՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ԼՕՆԴՈՆ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ Ուրբաթ, 29 նոյեմբերի (11 դեկտեմբերի) դուրս կը գնայ ԲԱԹՈՒՄԻՑ LABOURDONNAIS (ԼԱԲՈՒՐԴՆՈՆԵ) շոգենաւը, նաւապետ NIEL (ՆԻԷԼ) ղեպի Կ. Պօլիս, Մարսէլ, Հալիք, Լոնդոն, մտնելով և միջանկեալ նաւահանգիստները: Ազգեսները՝ ԲԱԹՈՒՄԻՄ, ՄԱԼԱՎԱԶԻ, ԹԻՖԼԻՍԻՄ, ԳԵՆՈՐԳ, ՀԵՋՈՒԲԵԱՆ, ՀԵՋՈՒԲԵԱՆ, Իսկ ԲԱԹՈՒՄԻ մէջ՝ ԳՕԼԻԼՈՒՍԵ: 2—2

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ սրանով յայտնում է ընդհանուր գիտութեան, որ իր ատենանում ղեկավարներ 5-ին, ներկայ 1891 թւի, առաւօտեան 10 ժամին, տեղի կունենայ անուրդ կապալով տալու Կուր գետի վրա Մուկրանսկի փողոցի և Սալի մէջ երթևեկող ՊԱՐՏՈՐ, 3 տարի ժամանակով: Կանգիցիաները կարելի է տեսնել վարչութեան ատենանում ամեն օր ժամը 10-ից առաւօտեան մինչև 12 ժամ կէսօրի: 6—6

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ցանկանում է պաշտօն ունենալ ԹԻՖԼԻՍԻ առևտրական տներին կամ գրասենեակներին միւսում: Գիտէ Հայերէն, ռուսերէն և թուրքերէն լիզուները: Կարող է երաշխաւոր էլ առաջարկել: Հասցէն մասին զիմե կամ «Մշակ» խմբագրատունը, կամ պ. Մոյսէս Վարդանեանի տպարանը, Վելիամինովսկայա փողոցի վրա: 4—6

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ սրանով յայտնում է ընդհանուր գիտութեան, որ իր ատենանում, նոյեմբերի 30-ին, ներկայ թւի, ժամը 10-ին առաւօտեան, տեղի կունենայ անուրդ կապալով տալու համար, 3 տարի ժամանակով, 2147 դեսիտարին և 2040 բառակուսի սաժէն մեծութիւն ունեցող, Հաւաքարում գտնվող քաղաքային գետինը: 6—6

ԱՄԵՐԱԿԱՐԵՒՈՐ ՏԵԳԵԿԱԳԻՐ վաճառականական դասակարգին պատկանող իւրաքանչիւր անձի համար ու ՄԱՏՁԵԼԻ ՁԵՆՆԱՐԿ առևտրական հաշարարութիւնը առանց ուսուցչի օգնութեան ուսումնասիրելու համար: Ս. ՄԱՆՈՒԷԼԵԱՆԻ

ՁԵՆՆԱՐԿ ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ՀԱՇԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Տոկոսների լիակատար աղիւսակներով, 1-ից մինչև 10.000 ռուբ. համար, 10-ից մինչև 120/0 վաճառվում է եղբայր Ծովիանովների բանկային գրասենեակում և հեղինակի մօտ. Тифлис, Нагорная ул., № 9. Օտարադաղաքացիք ղեկում են վերջին հասցէով С. П. Мануэляну. Գինն է 1 ռուբլի: Փոստի ծախս 21 Կ. Գրավաճառներին ղեկում կը լինի: 38—150

ՍԱՐՊԻՆԿԱ ՍՍՎԱԾ ՀԻՒՍՈՒԱԾՔ

Ս. ԲԵՆԴԵՐ, ՈՐԴԻՆԵՐՈՎ, Ա. ՍՏԵՓԱՆՕՎ և Վ. ԲԵՆԴԵՐ

ԳՈՐԾԱՐԱՆԱՏԵՐԵՐԻ

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ՏՈՒՆԸ

ՍԱՐԱՏՕՎԻՑ

Յայտնում է Թիֆլիսի պատուելի հասարակութեանը, որ բաց է անում յատուկ մագազին սեփական պատրաստութեան սարպինկա ասված հիւսուածքը, աղյուսները և բամբակեայ գուլպաների զործուածները Թիֆլիսում ծախելու համար:

Սարպինկա մի հիւսուածք է, որը պատրաստվում է ձեռքի միջոցով և այն նիւթից կարող են պատրաստվել կանանց ամենալաւ զգեստներ, մանուկների զգեստներ և տղամարդկանց շապիկներ:

Մագազինը գտնվում է Թիֆլիսում, Սոլովակում, Աղաբաթովի տանը, որտեղ առաջ գտնվում էր Ձիթախովի գրասենեակը:

ՎԱՃԱՌՈՒՄՆ ՄԱՍ ՄԱՍ

9—20

Ա. ԲԱԼԼԷ ԵՒ ԸՆԿ.

ՄՕՍԿՎԱՅՈՒՄ

ՊԱԼԱՏԱԿԱՆ ՀԱՅԹԱՅԹՈՂՆԵՐ

ՆՈՐՈՒԹԻՒՆ

XX դարի Սպիտ. եռամասն կապանիկ վարդ Չէրէմուխայի իշխանական ՍԱՊՈՆՆԵՐ ՕԾԱՆՆԵԼԻՔ Սպիտակ եռամասն զաշաի ծաղիկներ Սպիտակ իրիս

ՎԱՋԵԼԻՆԵԱՆ ՍԱՊՈՆ—ՎԱՋԵԼԻՆԵԱՆ ՊՕՄԻՐ

Ծախվում է ռուսաց կայսրութեան բոլոր քաղաքներում. ՊՐԵՍՎԱԿՈՒՐԱՆՏ ձրիպէս և ուղարկվում:

2—5 (2) № 1

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳԻՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Հոգեխաւերի կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԼԻՑ ղեպի ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկուշաբաթը մի անգամ, չորեքշաբթի 9/21 յունվարից սկսած, ԵՒ ՓՈԽԱԴԱՐՁ

Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսոն, և Կ. Պօլիս:

ԲԱԹՈՒՄԻՑ ՇՈՒԵՆԱԻՆԵՐ ԴՈՒՐՍ ԵՆ ԳԱԼԻՍ

Չորեքշաբթի, 6/18 նոյեմբերի	—	—	—
— 20 նոյեմբ. (2 դեկտեմբերի)	—	ԼԸ ՎՕԺ	— ՄԱՆԿԱ
— 24 նոյեմբ. (9 դեկտեմբերի)	—	ՄԻՆԳՐԵԼԻԱ	— ԺԻՐՈՒՆ
— 11/23 դեկտեմբերի	—	ՍԻՐԿԱՍԻ	— ԲՕՇԵԼ

և այլն, երկու շաբաթ մի անգամ, ՉՈՐԵՔՇԱԲԹ օրերը, 4 ժամին կէսօրից յետոյ: Տօմարները գնորդ ուղղակի երթևեկութեան Բաթումից ղեպի Պարիզ իսկական պակսեցրած են:

Տեղեկութիւնների համար ձանադարհօրներին և բեռների մասին թող բարհաճ ղեկմէ ընկերութեան ագէտներին. ԲԱԹՈՒՄԻՄ պ. Գարանիօնին, Նաբեքէճի ԹԻՖԼԻՍԻՄ պ. Վիկտօր ԴՄԱՆՕՒՆ, Միջին-փողոցում, Նախկին գնեղալ Տէր-Ասատուր տանը, ԲԱԳՈՒՄ, Սամուէլ Դիլարովին, Կօլիբիակինսկայա հրապարակ, և ՆՕՎՕՐՈՒՄ ՍԿՈՒՄ պ. Լուի Բընօրին: 3—6 (Ե. 2)

ՆՈՐ ՀԻՒՐԱՆՈՑ

„ԴԱՆԻԱ“

ԹԻՖԼԻՍԻՄ

Բաղաբի կենտրոնում, Գօրօլինսկի պրօսպէկտի վրա: Գեղեցիկ և մաքուր կահաւորված սենեակներ. օրը 60 կօպէկից մինչև 5 ռուբլի. ամսով մեծ զիջում է անվում:

Կերակուրները թարմ և համով:

НОВЫЕ НОМЕРА

„ДАНИА“

ВЪ ТИФЛИСѢ

въ центръ города, на Головинскомъ проспектѣ. Изящно и чисто меблированныя номера отъ 60 коп. до 5 руб. въ сутки; помѣсячно большая уступка.

Пища свѣжая и вкусная.

35—36



БЕРНАЯ СМЕРТЬ

„ՄԻՇՈՒՆԱՑ“

ՄԿՆԵՐ ԿՈՏՈՐԵԼՈՒ ՐԻՍ ԳՈՒՏՄԱՆԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ զիլաւոր պահանջ գտնվում է Թիֆլիսում և Բաղուր Բարձրագոյն հաստատված ղեկատան ապրանքների վաճառման Կովկասեան ընկերութեան մօտ: 50—50 (2)